

040.1002.260706

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈԶԱՐՅԱՆ

"26" հուլիսի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2006 թվականի N 1002-Ն

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ

Հավելված  
ՀՀ կառավարության  
2006 թվականի հուլիսի 13-ի  
N 1002-Ն որոշման

ԿԱՐԳ

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն գլխադրողներին հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքային ծառայության պաշտոնը համարվում է ժամանակավոր թափուր՝ հետևյալ դեպքերում՝

1) հղիության, ծննդաբերության եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի.

2) պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու.

3) մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով՝ սահմանված կարգով համայնքային ծառայողի գործուղման.

4) մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից գլխադրվելու:

5) համայնքային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության:

6) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը սույն կարգով նախատեսված դեպքերում կարող է գլխադրվել՝

1) տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող համայնքային ծառայողի կողմից:

2) տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող համայնքային ծառայության կադրերի ռեզերվում (այսուհետ՝ կադրերի ռեզերվ) գրանցված անձի կողմից՝ իր համաձայնությամբ:

3) տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող մեկ այլ անձի կողմից՝ իր համաձայնությամբ:

4. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող համայնքային ծառայողի կողմից կարող է գլխադրվել՝ մինչև վեց ամիս ժամկետով, սույն կարգի 2-րդ կետի 4-րդ եւ 5-րդ ենթակետերով, ինչպես նաեւ սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ վեց ամիսը չգերազանցող ժամկետով գործուղման դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ համապատասխան իրավական ակտով:

5. Տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն գլխադրող համայնքային ծառայողի փոխարինումը մեկից ավելի համայնքային ծառայողների կողմից նախատեսված լինելու դեպքում՝ նրանց փոխարինման ժամկետների հանրագումարը չպետք է գերազանցի վեց ամիսը:

6. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի կողմից կարող է գլխադրվել՝

1) սույն կարգի 2-րդ կետի 4-րդ եւ 5-րդ ենթակետերով, ինչպես նաեւ սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ վեց ամիսը չգերազանցող ժամկետով գործուղման դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ նրա հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ համաձայն ձեռք, կնքելով:

2) սույն կարգի 4-րդ կետով նախատեսված փոխարինման ժամկետի ավարտից հետո համայնքային ծառայության տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնն առաջանալու հիմքը չվերանալու կամ փոխարինողի թափարարության դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից՝ նրա հետ պայմանագիր կնքելով:

3) սույն կարգի 2-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերով, ինչպես նաեւ սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ վեց ամիսը գերազանցող ժամկետով գործուղման եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից՝ նրա հետ պայմանագիր կնքելով:

7. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված դեպքերում՝ եռօրյա ժամկետում,

տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը գրավոր դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին)՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող՝ սույն կարգով նախապատվություն ստացած՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի մասին տեղեկություններ ստանալու եւ նրա հետ պայմանագիր կնքելու համար:

8. Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դեպքում՝ գրավոր դիմումն ստանալուց հետո լիազորված մարմինը տասնօրյա ժամկետում առնվազն իր ինտերնետային էջում հրապարակում է հայտարարություն՝ կադրերի ռեզերվում գրանցված անձանց կողմից համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմում ներկայացնելու նպատակով:

9. Հայտարարության մեջ պետք է պարունակվեն առնվազն հետևյալ տվյալները՝

1) համապատասխան համայնքի անվանումը.

2) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը եւ տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

3) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները.

4) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը կամ դրա վերացման ժամկետը.

5) դիմումները ներկայացնելու վերջնաժամկետը, որը պետք է լինի տվյալ հայտարարության հրապարակմանը հաջորդող աշխատանքային յոթերորդ օրը.

6) լիազորված մարմնի գտնվելու վայրը եւ համապատասխան հեռախոսահամարը:

10. Սույն կարգի 9-րդ կետով նախատեսված հայտարարության հիման վրա ներկայացված դիմումներից նախապատվությունը տրվում է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող՝ համապատասխան համայնքում, իսկ դրա թափուր պաշտոնի դեպքում՝ համապատասխան մարզի մյուս համայնքներում հաշվառված անձանց:

11. Տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող՝ համապատասխան համայնքում, իսկ դրա թափուր պաշտոնի դեպքում՝ համապատասխան մարզի մյուս համայնքներում հաշվառված մեկից ավելի անձանց կողմից դիմում ներկայացվելու դեպքում՝ նախապատվության իրավունքը տրվում է տվյալ համայնքի ղեկավարի աշխատակազմի (Երեւանի քաղաքապետարանում՝ քաղաքապետարանի աշխատակազմի) (այսուհետ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմ) հաստիքների կրճատման հիմքով պաշտոնից ազատված եւ կադրերի ռեզերվում գրանցված անձին, այս պայմանի հավասարության կամ թափուր պաշտոնի դեպքում՝ առավել թափուր համայնքային ծառայության դասային աստիճան ունեցող անձին, այս պայմանի հավասարության կամ թափուր պաշտոնի դեպքում՝ տվյալ համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթում հաղթող ճանաչվելու եւ պաշտոնում չնշանակվելու հիմքով կադրերի ռեզերվում գրանցված անձին, այս պայմանի հավասարության կամ թափուր պաշտոնի դեպքում՝ համայնքային ծառայության առավել երկար ստաժ ունեցող անձին, այս պայմանի

հավասարության կամ թափանցիկության դեպքում՝ կադրերի ռեզերվում առավել երկար ժամկետով գտնվող անձին, այս պայմանի հավասարության կամ թափանցիկության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար ստաժ ունեցող անձին, իսկ այս պայմանի հավասարության կամ թափանցիկության դեպքում՝ առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող անձին:

12. Տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող, սակայն տվյալ մարզի համայնքներում չհաշվառված՝ կադրերի ռեզերվում գրանցված մեկից ավելի անձանց կողմից դիմում ներկայացված լինելու դեպքում՝ նրանց նախապատվության իրավունքը տրվում է սույն կարգի 11-րդ կետով սահմանված կարգով:

13. Լիազորված մարմինը սույն կարգի 10-րդ եւ (կամ) 11-րդ կետերով սահմանված կարգով նախապատվություն ստացած անձի մասին աշխատանքային երեք օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

14. Լիազորված մարմինը սույն կարգի 10-րդ եւ (կամ) 11-րդ կետերով սահմանված կարգով նախապատվություն ստացած անձին դրա մասին հայտնում է սույն կարգի 13-րդ կետում նշված տեղեկացման օրը:

15. Տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից դիմում չներկայացվելու կամ դիմում ներկայացրած՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից տվյալ պաշտոնի անձնագրի պահանջների չթավարարման դեպքում լիազորված մարմինը դրա մասին աշխատանքային երեք օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

16. Սույն կարգի 13-րդ կետով նախատեսված տեղեկությունն ստանալուց հետո աշխատանքային 7 օրվա ընթացքում սույն կարգի 10-րդ եւ (կամ) 11-րդ կետերով սահմանված կարգով նախապատվություն ստացած անձի՝ համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմ չներկայանալու (դրա մասին համապատասխան համայնքի ղեկավարը պարտավոր է եռօրյա ժամկետում տեղյակ պահել լիազորված մարմնին), ինչպես նաեւ սույն կարգի 15-րդ կետով ախատեսված դեպքերում համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող այլ անձի հետ կնքել պայմանագիր՝ հաշվի առնելով "Համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ, 12-րդ, 24-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

17. Չի թույլատրվում այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե համայնքային ծառայության տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնն առաջացել է նրա՝ այդ պաշտոնից օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի "բ", "գ", "ե", "թ", "ժ" եւ "ժթ" կետերով նախատեսված հիմքերից որեւէ մեկով ազատվելու հետեւանքով:

18. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը սույն կարգի 13-րդ կետով նախատեսված տեղեկություններն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում, իսկ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքերում՝ մեկամսյա ժամկետում, պայմանագիրը կնքում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր

իրավաբանական ուժ: Պայմանագրի առաջին օրինակը պահվում է համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմում, երկրորդը եռօրյա ժամկետում ներկայացվում է լիազորված մարմին, իսկ երրորդը նույն օրը տրվում է այն անձին, ում հետ կնքվել է պայմանագիրը:

19. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից մեկամսյա ժամկետում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները թավարարող մեկ այլ անձի հետ պայմանագիր չկնքվելու, ինչպես նաև սույն կարգով սահմանված կարգով կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման եւ տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքը չվերանալու դեպքում համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցվում է սույն կարգով նախատեսված ընդհանուր հիմունքներով:

20. Պայմանագրի գործողության ժամկետը, մինչև սույն կարգի 21-րդ կետով նախատեսված հիմքերից մեկի առաջացումը, կարող է երկարաձգվել համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման ժամկետի երկարաձգման դեպքում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի եւ այն անձի համաձայնությամբ, ում հետ կնքվել է պայմանագիրը (դրա մասին համապատասխան համայնքի ղեկավարը պարտավոր է եռօրյա ժամկետում տեղյակ պահել լիազորված մարմնին)

21. Պայմանագիրը լուծվում է՝

1) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման դեպքում՝ անկախ պայմանագրի գործողության ժամկետից.

2) օրենքի 33-րդ հոդվածով (սացառությամբ այդ հոդվածի 1-ին մասի "ե", "թ", "ժդ", "ժթ" կետերով) նախատեսված դեպքերում.

3) սույն կարգի խախտմամբ համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու դեպքում:

22. Պայմանագիրը ենթակա չէ լուծման տվյալ պաշտոնը պայմանագրով զբաղեցնող անձի անձնական դիմումի հիմքով, եթե առկա է սույն կարգով նախատեսված պայմանագրի լուծման որեւէ այլ հիմք, որով եւ պետք է լուծվի պայմանագիրը:

23. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու ժամանակահատվածում սույն կարգի 3-րդ կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետերով նախատեսված անձինք օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում եւ կարգով չեն կարող գործուղվել:

24. Չի թույլատրվում համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու ժամանակահատվածում տվյալ համայնքային ծառայության պաշտոնի անձնագրում կատարել այնպիսի փոփոխություն, որը կարող է հանգեցնել տվյալ պաշտոնը պայմանագրով զբաղեցնող անձի հետ կնքված պայմանագրի լուծմանը:

(կարգը խմբ. 05.03.09 թիվ 228-Ն որոշում)

Ձեւ

Ժամկետային աշխատանքային  
պայմանագիր կնքելու կարգի

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N \_\_\_\_\_

քաղ. (գ.) \_\_\_\_\_ 20 թ.  
Հայաստանի Հանրապետության

\_\_\_\_\_, մի  
(համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմի  
անվանումը)  
կողմից, ի դեմս

\_\_\_\_\_(այսուհետ՝  
(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)  
գործատու) եւ

\_\_\_\_\_  
(համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն գլխադեմող  
անձի անունը, ազգանունը, հայրանունը)

(ծնվ.՝ 19\_\_\_\_ թ \_\_\_\_\_-ին, հաշվառման վայրը՝ \_\_\_\_\_  
անձնագիր՝ N \_\_\_\_\_ տրված \_\_\_\_\_ կողմից \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_-  
ին)

մյուս կողմից (այսուհետ՝ պաշտոնակատար) կնքեցին սույն պայմանագիրը  
հետեւյալի  
մասին.

### I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Գործատուն հանձնարարում է, իսկ պաշտոնակատարն ապահովում է

\_\_\_\_\_

\_\_\_\_\_  
-ում

(համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմի անվանումը)

\_\_\_\_\_  
-ի

(համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը եւ  
պաշտոնի

անձնագրի ծածկագիրը)

պաշտոնի անձնագրով սահմանված պահանջների ճշգրիտ եւ ժամանակին  
կատարումը:

### II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերն ունեն "Համայնքային ծառայության մասին" Հայաստանի  
Հանրապետության օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներ  
եւ  
պարտականություններ:

### III. ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Գործատուն պաշտոնակատարին վճարում է ամենամսյա աշխատավարձ

\_\_\_\_\_

\_\_\_\_\_ դրամի չափով:

(գումարը նշել տառերով եւ թվերով)

IV. ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում

կողմերը կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

5. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են համայնքային ծառայության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

6. Սույն պայմանագիրը լուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության

2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված դեպքերում:

7. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

8. Սույն պայմանագիրը գործում է ստորագրման պահից՝ \_\_\_\_\_ ամիս (տարի) ժամկետով:

9. Սույն պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել կողմերի միջև գրավոր համաձայնագիր կազմելու միջոցով, որը կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

10. Սույն պայմանագիրը կնքվել է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Պայմանագրի կողմերը՝

Գործատու՝ \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Պաշտոնակատար՝ \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ.Տ.